

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՏՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Որակի ապահովման վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմնի) կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, սույն Կանոնադրությամբ, Տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) որոշումներով և Տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում տեսչական մարմնի ղեկավարը:

II ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրն է՝ Տեսչական մարմնի գործունեության շարունակական կատարելագործման ապահովումը՝ տեսչական մարմնի նպատակների ու խնդիրների իրականացման և տեսչական մարմնի գործունեության սկզբունքների ամբողջական իրագործման նպատակով: Վարչությունը Տեսչական մարմնին աջակցում է ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով հասնել իր նպատակների իրագործմանը:

III ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչության հիմնական գործառույթներն են՝

1) Տեսչական մարմնի կատարողականի գնահատում,

2) Տեսչական մարմնի գործունեության արդյունքների ուսումնասիրում և վերլուծություն: Վերլուծության արդյունքների ներկայացում Խորհուրդ,

3) Տեսչական մարմնի, նրա ծառայողների գործողությունների կամ անգործության կամ նրա կողմից ընդունված իրավական ակտերի վերաբերյալ ստացված բողոքների պատճառների և արդյունքների վերլուծություն: Վերլուծության արդյունքների ներկայացում Խորհուրդ,

4) Տեսչական մարմնի կարգապահական կանոնների ապահովման վերլուծություն: Վերլուծության արդյունքների ներկայացում Խորհուրդ,

5) Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների, այլ փաստաթղթերի նախապատրաստում և ներկայացում,

6) Վարչության լիազորությունների շրջանակներում հաշվետվությունների, առաջարկությունների, տեղեկանքների և միջնորդագրերի նախապատրաստում,

7) Խորհրդի հաստատմանը ներկայացնելու նպատակով ապահովում է Տեսչական մարմնի որակի ապահովման տարեկան ծրագրի կազմումը և ներկայացումը Խորհրդին և պարբերաբար հետևում դրա իրականացմանը:

IV ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, որը հաշվետու է Խորհրդին:

8. Վարչության պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները,

2) կատարում է Տեսչական մարմնի ղեկավարի կողմից իր լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները:

9. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետներից մեկը՝ Վարչության պետի ներկայացմամբ:

10. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են Վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում նրան փոխարինողի կողմից:

11. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել ՀՀ կառավարության և ՀՀ վարչապետի որոշումներով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում: